

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ RA GEGHARKUNIK MARZ



<i>Մարզկենտրոնը`</i> p. Գավառ	<i>Marz centre</i> Gavar town
<i>Տարածաշրջանները</i>	<i>Territoires</i>
Գավառ	Gavar
Սևան	Sevan
Մարտունի	Martuni
Վարդենիս	Vardenis
Ճամբարակ	Tchambarak
<i>Քաղաքները`</i>	<i>Towns</i>
Գավառ	Gavar
Ճամբարակ	Tchambarak
Մարտունի	Martuni
Սևան	Sevan
Վարդենիս	Vardenis

Տարածքը Territory	5 349 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը Territory share of the marz in the territory of RA	18.0 %
Համայնքներ, 2017թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2017	92
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2017թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2017	230.7 հազ. մարդ/ ths. person
<i>այդ թվում`</i> <i>of which</i>	
քաղաքային urban	68.4 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	162.3 հազ. մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը Share of marz population size in RA population size	7.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը Share of urban population size	29.6 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 528.0 հա/ ha
այդ թվում` վարելահողեր of which: arable land	81 725.9 հա/ ha

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Սասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1 278.7 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900.52 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական աղեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

RA Gegharkunik marz is situated in the east of the territory of the Republic of Armenia, surrounding Lake Sevan.

It borders RA Lori and Tavush marzes from the North, from the East it borders the state border of Azerbaijan, from the South – RA Vayots Dzor marz, from South-West – RA Ararat marz and from the West – RA Kotayk marz.

The longest extension of the marz from the North-West to the South-East comprised 115 km, from the West to the East – 85 km, the deepest landslide is the canyon of the Getik river (village of Dzoravank, 1 325 m), the highest peak – Ajdahak mountain (3 598 m).

Spitakasar (3 555 m), Vardenis (3 522 m) and Geghasar (3446 m) are the highest mountains. Argitchi (51 km), Gavaraget (47 km) and Masrik (45 km) are the longest rivers.

Lake Sevan is the largest lake (1 278.7 km², the height above sea-level is 1 900.52 m); crater lakes Ajdahak and Aghmaghani are comparatively small – up to 50 m in diameter and at a depth of 15 m.

Yerevan-Sevan-Dilijan highway of republican importance runs through the territory of the marz. “South-North” highway passing through the mountain of Selim is being constructed.

The Lake Sevan is located in RA Gegharkunik marz, which is of particular importance not only for the marz but for the republic as well. It is the largest pool of fresh water of the Southern Caucasus. The lake has vital influence not only on balance of environment protection but on economy of the whole marz as well.

“Sevan” national park is located in the territory of the marz (founded in 1978). It occupies the territories of the Lake Sevan comprising the bed of intermontane concavity of Sevan and those freed from its bed. The surface area comprises 150.1 ths. ha, 24.9 ths. ha of which are lakeside land territories. It is surrounded with the slopes of mountain chains of Areguni, Geghama, Vardenis, Pambak and Sevan. The species of 1 600 plants and 330 animals are preserved here.

Numerous mines are situated in the marz of Gegharkunik such as the mines of gold, dolomite, basalt, sand, volcanic tuff. A part of exploiting mines extracts the considerable part of ores in the country.

2016թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 2.2 %
- գյուղատնտեսություն 12.7 %
- շինարարություն 4.0 %
- մանրածախ առևտուր 1.7 %
- ծառայություններ՝ 1.2 %

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոնը Գավառը (2017թ. տարեսկզբին՝ 19.1 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էսպես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Սևան քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 19.1 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

Մարտունի քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 12.0 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:

In 2016 the share of economy main branches of RA Gegharkunik marz in total volume of correspondent branches of the republic comprised.

- industry 2.2 %
- agriculture 12.7 %
- construction 4.0 %
- retail 1.7 %
- services 1.2 %

The leading branch of economy of the marz is agriculture, particularly production of grain, potato, vegetable and animal husbandry product.

Mining industry is the main trend of industry of the marz. Manufacturing is also of great importance, in which the following branches of industry have bigger share: machinery, building materials and food industry.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport.

The marz centre is Gavar town (19.1 ths. inhabitants in end of 2017), it is situated in the distance of 92 km from Yerevan. The town once used to be one of the industrial centres of the republic, but the production of industrial output was considerably shortened because of discontinuance of works of a number of large factories.

Nowadays, the agriculture is the key branch in economy and the main sphere of employment of population.

Nowadays manufacturing is the main trend of industry of the town, in which the following branches of industry have bigger share: machinery, building materials, light and food industry.

Sevan town (as of the beginning of the 2017 19.1 ths. inhabitants, in the distance of 66 km from Yerevan) is located on the northwestern shore of Sevan lake. The turizme is the key branch in economy and the main sphere of employment of population.

Manufacturing is the main trend of industry of the town, in which the following productions of industry have bigger share: building materials, chemical, food and machinery productions.

Martuni town (as of the beginning of the 2017, 12.0 ths. inhabitants) is located on the southwestern shore of Sevan lake (in the distance of 130 km from Yerevan). Industry is the main branch of economy, though considerable reduction of volumes of produced output has been recorded recently.

Manufacturing is the main trend of industry of the town, in which the following branches of industry have bigger share: machinery, building materials, chemical and food industry.

Վարդենիս քաղաքի (2017թ. տարեսկզբին՝ 12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2017թ. տարեսկզբին՝ 5.7 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:


Industry is the leading branch of Vardenis town (as of the beginning of the 2017 12.5 ths. inhabitants the in distance of 168 km from Yerevan). There are especially great perspectives in exploitation of mines and processing of agricultural produce.

Manufacturing is the main trend of industry of the town, in which food industry has bigger share.

Agriculture is the leading branch of economy and the main sphere of employment of population in the town of Tchambarak (as of the beginning of the 2017 5.7 ths. inhabitants, in distance of 119 km from Yerevan). By comparison industry is poorly developed.

More than 90% of natural forests of the marz are situated in Krasnoselsk district. Manufacturing is the main trend of industry of the town, in which food industry has bigger share.

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ,
2017թ. հունվարի 1-ի դրությամբ
DE JURE POPULATION BY AGE –SPECIFIC GROUPS, 2017 as of January 1**



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ
RETAIL TRADE UNITS

	Քանակը Number					
	2012	2013	2014	2015	2016	
Մանրածախ առևտրի օբյեկտներ, րնդամենը	476	443	498	551	532	Retail trade units, total
<i>այդ թվում՝</i>						<i>of which:</i>
խանութներ	269	239	288	333	339	Shops
կրպակներ	144	140	144	121	98	kiosks
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	1	markets of agricultural product
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	2	markets of consumer goods
առևտրի այլ օբյեկտներ	59	60	62	93	92	other trade units

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
EDUCATIONAL INSTITUTIONS

	Քանակը Number					
	2012	2013	2014	2015	2016	
Պետական նախադպրոցական	42	42	44	42	42	State pre-school
Պետական հանրակրթական	126	126	126	126	126	State general educational
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	17	15	15	15	Music and art school youth creative (cultural) centre
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	3	3	4	State preliminary vocational educational ¹
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	8	8	7	7	State middle vocational educational
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1	Non-state middle vocational educational
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1	State higher educational
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1	Non-state higher educational

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

ՔԱՂԱՔՆԵՐ
TOWNS/CITIES

Անվանումը	Town name	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ * Population de jure number as of January 1, 2017, person *
Գավառ	Gavar	19 069
Սևան	Sevan	19 103
Մարտունի	Martuni	11 960
Վարդենիս	Vardenis	12 550
Ճամբարակ	Chambarak	5 691

ԳՅՈՒՂԵՐ
VILLAGES

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of de jure population as of January 1, 2017, person **
Գավառի տարածաշրջան Gavar district			
1	Բերդկունք	Berdkunk	300
2	Գանձակ	Gandzak	4 242
3	Գեղարքունիք	Gegharkunik	1 922
4	Լանջաղբյուր	Lanjaghbyur	2 531
5	Լճափ	Lchap	1 155
6	Ծաղկաշեն	Tsaghkashen	593
7	Ծովազարդ	Tsovazard	2 207
8	Կարմիրգյուղ	Karmirgyugh	6 298
9	Հայրավանք	Hayravank	901
10	Նորատուս	Noratus	6 100
11	Սարուխան	Sarukhan	8 369
Կրասնոսելսկի տարածաշրջան Krasnoselsk district			
1	Աղբերք	Aghberk	319
2	Այգուտ	Aygut	910
3	Ճապկուտ	Tchapkut	-
4	Անտառամեջ	Antaramej	161
5	Արտանիշ	Artanish	605
6	Արծվաշեն	Artsvashen	-
7	Գետիկ	Getik	469
8	Դպրաբակ	Dprabak	593
9	Դրախտիկ	Drakhtik	1 006
10	Թթուջուր	Ttujur	1 117
11	Կալավան	Kalavan	102
12	Բարեպատ	Barepat	48
13	Ջորավանք	Dzoravank	140
14	Մարտունի	Martuni	583
15	Շորժա	Shorzha	563
16	Ջիլ	Jil	665
17	Վահան	Vahan	1 130

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of de jure population as of January 1, 2017, person **
Մարտունու տարածաշրջան Martuni district			
1	Աստղաձոր	Astghadzor	4 659
2	Արծվանիստ	Artsvanist	3 300
3	Գեղհովիտ	Geghhovit	6 106
4	Նշխարք	Nshkhark	-
5	Լեռնակերտ	Lernakert	285
6	Երանոս	Yeranos	5 512
7	Զոլաքար	Zolakar	6 756
8	Լիճք	Lichk	5 247
9	Ծակքար	Tsakqar	2 908
10	Ծովասար	Tsovasar	3 029
11	Ծովինար	Tsovinar	5 161
12	Զորագյուղ	Dzoragyugh	4 647
13	Մադինա	Madina	1 147
14	Ներքին Գետաշեն	Nerkin Getashen	8 663
15	Վաղաշեն	Vaghashen	4 337
16	Վարդաձոր	Vardadzor	3 036
17	Վարդենիկ	Vardenik	8 658
18	Վերին Գետաշեն	Verin Getashen	4 784
Մևանի տարածաշրջան Sevan district			
1	Գագարին	Gagarin	1 348
2	Գեղամավան	Geghamavan	2 067
3	Դրմաշեն	Ddmashen	2 808
4	Զովաբեր	Zovaber	1 576
5	Լճաշեն	Lchashen	4 875
6	Ծաղկունք	Tsaghkunc	1 088
7	Ծովագյուղ	Tsovagyugh	4 420
8	Նորաշեն	Norashen	472
9	Չկալովկա	Chkalovka	516
10	Սեմյոնովկա	Semyonovka	251
11	Վարսեր	Varser	2 019
Վարդենիսի տարածաշրջան Vardenis district			
1	Ազատ	Azat	136
2	Ախպրաձոր	Akhpradsor	397
3	Ակունք	Akunk	4 188
4	Այրք	Ayrk	538
5	Ավազան	Avazan	198
6	Արեգունի	Areguni	361
7	Արփունք	Arpunk	587
8	Գեղամաբակ	Geghamabak	126
9	Գեղամասար	Geghamasar	1 083
10	Գեղաքար	Geghakar	167
11	Դարանակ	Daranak	204
12	Զառիվեր	Zariver	-
13	Լճավան	Lchavan	582
14	Լուսակունք	Lusakunk	1 561
15	Խաչաղբյուր	Khachaghbyur	1 329
16	Ծափաթաղ	Tsapatagh	347
17	Ծովակ	Tsovak	2 904

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of de jure population as of January 1, 2017, person **
18	Կախակն	Kakhakn	488
19	Կարճաղբյուր	Karjaghbyur	2 541
20	Կուֆ	Kut	168
21	Կուտական	Kutakan	285
22	Մաքենիս	Makenis	532
23	Մեծ Մասրիկ	Mets Masrik	3 459
24	Ներքին Շորժա	Nerkin Shorzha	81
25	Նորաբակ	Norabak	271
26	Նորակերտ	Norakert	1 024
27	Շատջրեք	Shatjrek	462
28	Շատվան	Shatvan	445
29	Ջաղացաձոր	Jaghatsadzor	155
30	Սոթք	Sotk	972
31	Վանևան	Vanevan	328
32	Վերին Շորժա	Verin Shorzha	110
33	Տորֆավան	Torfavan	514
34	Տրետուք	Tretuk	215
35	Փամբակ	Pambak	533
36	Փոքր Մասրիկ	Pokr Masrik	800

* ՀՀ մարզերի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

Population of town of the RA marzes is presented according to current statistics data based on population Census of 2011.

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 952 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն արընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2017թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +13.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

The sources of these data on RA rural communities are the state statistical reporting forms «Sex and age composition of rural population» provided by the rural communities on annual basis. According to those sources the sum total of de jure population of 952 RA rural settlements as a whole and by marzes has some deviation from the same data of current statistics of population, which are based on the data from administrative registers of RA Ministry of Justice and RA Police under RA Government (as of 01.01.2017 the deviation comprised +13.8% for the republic). The deviation is mainly stipulated by the absence of the system of exchange, comparing and checking in individual data level of the given information between rural communities.

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2016թ.
SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000
POPULATION IN RA GEGHARKUNIK MARZ, 2016**

	Ընդամենը Total	նրանցից՝ including:		
		կանայք ¹ women ¹	տղամարդիկ ¹ men ¹	
Բնակչությունը, մարդ	10 000	4 980	5 020	Population, person
Ծնվածներ, մարդ	131	59	72	Births, person
Մահացածներ, մարդ	83	40	43	Deaths, person
Ամուսնություններ	46	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	6	X	X	Divorces
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավակերեսով, քառ.մ	31.1	X	X	Total area of housing stock provided per inhabitant, square metre
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to educational institutions, person
նախադպրոցական	134	65	69	pre-school
հանրակրթական	1 240	569	671	general schools
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	124	76	48	musical, art schools, creative centers for children
նախնական մասնագիտական (արհեստագործական)	21	4	17	preliminary vocational
միջին մասնագիտական	51	30	21	middle vocational
բարձրագույն մասնագիտական	63	32	31	higher vocational
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 261	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	75	4	71	Athletes, person
Զբաղվածներ, մարդ	2 742	1 326	1 416	Employed, person
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-	including- in Science establishments
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-	including- doctors of Science
գիտության թեկնածուներ	-	-	-	candidates of Science
ուսուցիչներ	149	119	30	teachers
բժիշկներ	14	physicians
միջին բուժանձնակազմ	41	paramedical personnel
Գործազուրկներ, մարդ	121	44	77	Unemployed, person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 371	809	562	total pensioners/ as of the end of the year/ person
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	578	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակը տարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	13 604	library
թատրոն	56	theatre
համերգ	-	-	-	concert
թանգարան	130	museum
Իրավական ոլորտ				Law sphere
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	36	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	18	X	X	of which - not grave crime
միջին ծանրության	14	X	X	medium crime
ծանր	4	X	X	grave crime
առանձնապես ծանր	0.0	X	X	special grave crime

¹ Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.